

Ա Ր Ե Ի Մ Ո Ի Տ Ք

ԱՐՁԱՊԱՆԷՐ ԵՒՐՈՈՍԷՐ ԼՈՒՍՈՒՊԱՆԻՐԵԱՆ.

Ա. ՏՈՒՐԻՆ ԵՐԻՆ. Փ. Հրատարակիչ լուսկոյ եղբու անգամ, խաղիսկի ծառն է: Կոնստանդնուպոլիս. — Բուսիլ. Ազգայն Գրադարան, 24, ուսմե Վուդուս. 1859 թ. ապրիլ 2.
— Գոյկա. — Եզմիլ. Ազգայն Գրադարան. — Եզմիլ. Ազգայն Տէր. Գրադարանն Եզմիլ:

ՊԱՏՈՍԻՆ.

Աստուծոսիան մը, ոչորայի նամակով, կը խնդրէ որ
Յեռին Աղանահրածի վէպին շարունակութիւնը Արեւ-
մասցին մէջ հրատարակէր: Կը հարկադրուին իր
խնդիրը չկատարել, փասն զի հիմա գրեթէ, երկը աւելա-
ստարիչ որ նամակադրանին այս սիրուն վէպին մէկ մասը
Թարգմանեցինք, և ընթերցողը բուն մը չտեսի կրնայ
հասկնալ եթէ մնացորդը հոս դնենք: Ասկէ դուրս Արեւմտ-
քին համար պատրաստած մեր Էրկարամիայ աշխու-
սածիւնները փնայան և ոչ միայն նամակադրանին այս
և քանի մը ուրիշ Երկարութիւնը Թարգմանութիւնն
հապի մէկ մէկ երկու պակասութեամբ Թերմէր կը մնան քա-
վերին: Նորէն Թարգմանելու սկսիլ առաջարկի բուն է
մեզի համար. ուրիշ յեղատագիտի մը կը Թարգմանք այս
աշխատութիւնը և կը փախուցնենք որ մեզմէ աւելի յա-
րպտեալներ կատարէ զայն:

Յեռին Աղանահրածի Թարգմանութիւնն երգ մը միայն
գտունը մեր Թարգմանք մէջ. ընթերցիչը շատ սիրուն և
խրեւելի է. չգիտենք եթէ հայերէնը քնն արժէք տնի:

ՀԱՅԵՐԵՆԻՔԻ ՅԵՐՈՍՄԱՆ.

Չխորդ յիշատակ սիրայ և մեկու.
Երկիր ուր ծնայ ի սիրտ իմ հեղու.
Թրանապին աւարք գիւնդ գեղանի
Փայլերն, բայր իմ, իւրայ գաղմանի:
Դու սիրայ իմ կէտ արժար և յապայ
Ղեր, ո՛ հայրենիք, յիննն բացակայ:

Արեւ. յիշելի լինին քեզ տակաւ,
Անը հիւղեալ և հոս իւրով խորտակաւ:
Յիւնս, բնք, գիւնդ մայր մեր բերկրայի
Դիրի բնդ խառն լնայ մեզ լինէր սիրով ի.
Զխորդ յիւր հովաւ ուր միւն հեր շողայր
Համբարք միասիրտ մեր բերան միշտ տոգր.

Արեւ. յիշելի էն քեզ մինչև ուրդ
Եւ յերդ զոր Թանայր Տօրս միշտ դուրս,
Եւ աւրակ Մօրի, ամբակ հինարեայ
Ուր անբան հակըր զոնգակ արարեայ,
Եւ դարեալայ տնդ հնչէր մեղմին

Արեւ. մեր ներկէտը յանկոյին ընթինի:
Յիւնս գու իմ բայր գոնվրզով յեակ
Զոր բախէր յաշիկ ծիծառն շայտ Թեան,
Եւ զնորդ հեշտին որ զնկեղ շարժան
Յերկիր կայտ անգայ խառնարնէր նկուն,
Եւ դարեղ սիրուն որ գայր առաւանէր
Եւ շարք սքօղեալ ի մայր մասնէր:

Ա՛ գիւմ Հեղինա, զլիսաւն պարարտ
Բղկայնին բառաւար, ո՛ տոցէ ինձ արդ.
Ա՛ն էս առաւայիմ աղէյսը սրտիս
Յիւնայ գետտ գգիւնը և սիր:
Դուն լիցիս իսպառ սիրտը նորատակ
Դուն իմ կարօտեալ հայրենի յատակ

ՀԱՅԵՐԵՆԻՔԻ

ՄԱՆՈՆ ԼԷՍԳՕ.

(Շարունակութիւն Տես քիւ 8, էջ 57.)

Ամիէնէ մեկնելու ժամը արդէն որոշէր էի : Ամաւսնս էր թէ մէկ օր առաջ այս որոշումը ընէի, վասն զի այս կերպով պիտի կրնայի բոլոր անմեղութիւնս վատանգէ ազատել և հայրական զիրկին յանձնել դայն : Քաղքէն հեռանալու օրին առջի իրիկուն բարեկամիս հետ, որ Թիպէրժ կ'անուանէր, պտըտելու ժամանակ տեսանք որ Առասին ուղեկաւորը կը հասնէր և հաւանքն զացիներ մինչև այն հիւրատունը ուր համբորդները կ'իջնէն : Հետաքրքրութիւնէն ուրիշ առիթ մը չ'ունէինք այսպէս վարուելու համար : Քանի մը կրնէր կառքէն դուրս ելան և տեղերին քաշուեցան շուտով. սակայն մէկը, որ նորատի էր, բակին մէջ կանգ առաւ. հասակաւոր մարդ մ'ալ, որ իր առաջնորդը կ'երեւէր, կը ջանար համբու պարկերը վար առնուլ կառքէն : Այնքան դժայիլի երեւցաւ ինձ անկա որ մէկէ ի մէկ սիրով բռնկեցայ և խելքս թաւ գլխէս : Այն, էս որ երբեք արուի և էջի տարբերութիւնը չ'էի մտածեր, էս որ զեռ օրիորդի մը երես ուշադիր չ'էի նայեր, էս, ինքս, որուն խոհմտութիւնը և պոռնութիւնը ամենուն զարմանք կուտար, էս անորմէ յարկաւորուեցայ յանկարծակի : Մինչև այն ժամը չափէ գուրս վախկոտ էի և շուտով կը շփոթէի մարդու առջև. բայց այս պակասութիւնը փոխանակ զսպելու կարծես թէ կը զրգուէր զիս, և նետուեցայ զէպ ի սիրտիս տիրութիւն կողմը :

Թէպէտ և այս օրիորդը տարիքով ինէ աւելի պզտի ըլէր, անշիտմ կերպով ընդունեց սիրալիր խօսքերը որ ըսի իրեն : Հարցուցի, թէ ինչ առիթով Ամիէն կուգար և թէ ծանօթ անձեր ունէր հոն : Պատասխան տուաւ միամտաբար որ ծնողքը զինք այս քաղաքը կը զրկէին հաւատունի ըլիւ համար : Հազիւ թէ բոլէ մը կար որ սրտիս մէջ էր անկիւս, բայց արդէն սէրը այնքան աչքս բացեր էր որ շուտով խնայայ թէ այս որոշումը մահաբեր հարուած մը պիտի տար փախազներուս : Աերպով մը անոր հասկցուցի սրտիս զգայութիւնները, վասն զի իղմէ աւելի փորձառու էր անիկա, և տեսայ որ զրեթէ բռնի վանք կը մտնէ : Անտարակոյս ծնողքին նպատակն էր զաղրեցնել զբոսներու իր այն միտումը որ արդէն սկսեր էր յայտնուիլ և որ հաբը իր ու իմ բոլոր աղէտքներու պատճառ եղաւ : Ծնողական անգութ մեծիւնն զէմ զրի այն ամէն փաստերով որ նորածին սէրս և զպրական պերճախօսութիւնս ինձ տուին : Երեսնէն ոչ խոտութիւն և ոչ արհամարհանք յոյց տուաւ անիկա : Վայրկեան մը լռութիւնէ հարձուսաւ ինձ, թէ ինքն ալ յառաջմէ լաւ կը տեսներ որ ինչուստութիւն կը զլորուէր և թէ՛ աստուծոյ կամքն էր այն երեւեակալէս, որովհետեւ անկէ խուսելու հար. մը

չկար : Իր հայուածքին անուշութիւնը, սիրաբոյր տըրտմութեան կերպարանքը, այս խօսքերը բերնէն հանելու ժամանակ, մանաւանդ թէ հակառակորդիս բռնութիւնը, որ ի կորուստ կը մղէր զիս, չնհրկցին որ բոլէ մը թեթեւիմ ընելիք պատասխանիս վրայ : Ապահովցուցի զինքը որ թէ պատուոյս վրայ փոտահի և ինձ տուած անհուն սիրոյ ազատինի, կեանքս պիտի զոհեմ ծնողքին բռնութիւնէն զինքը ազատելու և երջանիկ ընելու համար : Բիւր անգամ զարմանք եկիւր է վրաս, մտածելու ատենս, թէ ինչպէս խօսելու այդքան համարձակութիւն և զկարութիւն ունեցայ այն վայրկեանի մէջ. բայց մարդիկ սէրը աստուածունի չ'էին դառններ թէ յուրժակի պայպիսի հրաշքներ չ'ընէր : Այս ամէնը ըսի իրեն և ուրիշ շատ համոզակեր խօսք ալ վրայ զրի :

Պեղանի օրիորդը լաւ գիտէր որ մարդ՝ իմ հասակիս մէջ, խաբէրայ չ'է. ստաի խոստովանեցաւ որ թէ զինքը ազատելու նշոյլ մը կը տեսնեմ պարտաւոր պիտի ըլլի ինձ կեանքէ աւելի սիրելի բանի մը : Արկնեցի իրեն որ պատրաստ էի ամէն միջոցի ձեռք դարձել, բայց սրովհետեւ բաւական փորձ չ'ունէի մէկէ ի մէկ հնարք մը գտնելու և ըսածս իրօք կատարելու, այս ապահովութիւնը ապէն ուրիշ բան չ'էր ընէր որ ոչ իրեն և ոչ ինձի համար մեծ օգնութիւն մը կրնար բերել : Մինչ այս մինչ այն իր հասակաւոր Արկիւսը քովերիս գաղով, ամէն յոյս պիտի փարատէր թէ օրիորդին բեղմնաւոր միտքը խմբիս անբեղմնատրութեան տեղը չ'ընէր : Երբ իր առաջնորդը եկաւ՝ զարմանքով մը լսեցի որ հօրեղբօր սրղին անուանեց զիս և ամենեւին չ'ըրպովելով ըսաւ ինձ թէ՛ վանք մանկը հետեւալ օրին կը թողու որպէս զի հետս ընթրելու դուարթութիւն ունեայ, և Ամիէնի մէջ ինձ հանդիպելուն երջանկութիւնը վայելէ : Մէկէն հասկցայ այս շինծու խօսքերուն միտքը և իրեն առաջարկեցի հիւրատուն մը որուն տէրը երկար տառն հօրս կուտալարը ըլլէին հոն, հիմա Ամիէնի մէջ տեղաւորուած է և ինձի համար բոլորովին կը նուիրուի : Այս ըսի և առաջ քալեցի անոր հետ, մինչդեռ ծերունի առաջնորդը կը մըրմար և Թիպէրժ բարեկամս, որ այս ամենէն բան մը չ'էր ըմբռներ, հոնէս կուգար անմուռն : Անիկա մեր խօսակցութիւնը չ'էր լսել և բակին մէջ պտըտելով սպասեր էր, երբ էս սիրոյ վրայ խօսք կ'ընէի շքեղ օրիորդին հետ. բայց սրովհետեւ կը վախճնէի որ չգայ խոհմտութիւն չ'ընէր այն ատեն, բովէս համբեցի զինքը աղաչելով որ յանձն առնու այս ինչ գործը կատարելու : Այս կերպով հիւրատուն հասնելու ատեն, ուրախութիւն ունեցայ առանձին խօսիլ սրտիս թագուհիին հետ : Շատ չ'անցաւ տեսայ որ այնքան տղայ չ'էի որչափ որ կ'երեւակայէի էս : Միտաւ կը զեզուր բիւր դուարթալի զգայութիւններէ սրանց տեսիլը անգամ չ'ունէի : Անոյշ տաքութիւն մը կը ծաւալէր բոլոր երակներ-

բուս մէջ : Այնպիսի հոգեծե քերկրութիւն մը կղզայի որ քանի մը ժամ լեզուս բռնուեցաւ և միայն աչքերս կը խօսէին ու կը յայտնէին դայն :

Օրիորդ Մանօն Աւարօն, այս էր իր անունը, շատ զոհ եղաւ իր մոգիչ գեղեցկութեան արդիւնքը տեսնելով : մեղմիկ նշմարեցի որ զրեծէ ինծի չափ իր սիրտն ալ կը յուզուէր : Խոստովանեցաւ թէ՛ սիրուն կը զանէր զիս և թէ՛ կարգէ զուրս ուրախութիւնս պիտի զգար իր ազատութիւնը ինծի պարտաւորուիլ : Ուղեց հասկնալ թէ ով էմ ես. այս տեղեկութիւնը իր սէրը աւելցուց. որովհետեւ հասարակ ընտանիքէ ըլլելով փառք սեպեց իրեն ինծի՝ պէս սիրական մը զանել և անոր սիրտին վրայ տիրել : Խօսքը ինկաւ ու իրարմէ չբաժնուելու համար միջոցներու վրայ :

Շատ խորհուրդներէ ետեւ տեսանք որ փախելէն ուրիշ համբոյ չկար : Ուտի պէտք էր նախ առաջնորդին հետադարձութիւնը խաբել, վասն զի որչափ և սպասաւոր մը կը սեպուէր, կրնար իր խօսքը առաջ տանիլ և ամէն բան արել : Միտքս սրտեցիմք թէ՛ զիշերը կտար մը պատրաստել պիտի տայի և առտուն կանուխ հիւրատուն պիտի գտնայի անոր քուն եղած ատեն, երկուքս մեկտեղ պիտի մեկնէինք և ուղղակի Ռարիզ պիտի երթայինք, ուր համեմու ժամանակ պիտի կարգուէինք անմիջապէս : Նո զրեծէ յիտուն ոսկի ունէի, զորս միտամի ժողուէր էի ձեռքս անցած ստալը խնայելով : անիկա այս գումարին զրեծէ կրկինք ունէր : Անշուրձ տղայի պէս երեսպայեցիմք թէ՛ այս գումարը անհատնում էր և ապահով ըլլալով այս կողմէ ոչ նուազ վնասատեւեամբ սպասեցիմք միւս որոշումներու յաջողութեան վրայ :

Յուսածէն աւելի բերկրութեամբ ընծրելէն ետեւ, զուրս ելայ մեր խորհուրդը կատարելու համար : Ամէն բան զիրար կարգի զրի, վասն զի հետեւեալ օրը հօրս քով դառնալու միտք ունենալով համբու կտարք արդէն պատրաստ էր : Ծանրութիւն մը չ'եղաւ ուրեմն ինձ անտուկս փոխադրել և կտարս պատրաստել տալ առտուն ժամը հինգին համար : Գաղքին դուռերը այն ատեն միայն կը բացուէին. սակայն ուրիշ արգելք մը կար որմէ չ'էի կասկածեր և որ մտղ մնաց զիտաւորութեան հիմն ի վեր պիտի տարէր : Թիպերժ, թէպէտեւ երեք տարիով միայն իզմէ մեծ ըլլէր, հասուն միտքով և ծանր բարքով երկրաստարգ մ'էր : Ատրգէ զուրս սիրով կը սիրէր զիս : Մանօնի պէս գեղամի օրիորդի մը տեսքը, զանիկա առաջնորդելու փոքս և զինքը զլիսէս ճամբելու զգուշութիւնը իմ սիրոյ վրայ փոքր կասկած տուին իրեն : Զ'էր համարձակեր որ հիւրատունը դառնայ վախճելով թէ անկէ կվիրաւորուիմ, բայց զացեր սենեկին մէջ իս կ'սպասէր, ուր զտայ զինքը հասած ատենս թէպէտ և կէս զիշերին երկու ժամ մնացած ըլլէր : Իր ներկայութիւնը ինձ արամութիւն տուաւ : Ինքն ալ նշմա-

րեց անոր պատճառը իմ շարժումներէս : Հատաստի եմ, ըսաւ անիկա պարզօրէն, որ զիտաւորութիւն մը ունիս զոր կը պահես իզմէ. կերպարանքէդ կը զուշակեմ ես դայն : Դէպ կերպով պատասխան տուի իրեն որ ստիպուած չ'եմ ընկիւններս իր առջև դնել : Այնպէս է, ըսաւ նորէն ինձ, բայց հետո միշտ բարեկամօրէն վարուէր էք և բարեկամութիւնը քիչ մը վստահութիւն և անկեղծութիւն կ'ենթադրէ : Այնքան վրաս ինկաւ, այնչափ երկար ազաւեց միտքս յայտնելու համար որ ծալքէ իմայրսէրս պատմեցի աւելորդ սեպելով պատրուակել, որովհետեւ մինչև այն ժամը իրմէ չ'էի զգուշացեր երբէր : Պատմութիւնս լսելու տունն այնպիսի զմզմ գէմք մը ցոյց տուաւ, որ սիրաս զող երաւ : Չզուայի մոռնաւորնոյ անզգուշութեան վրայ որով փախուտի զիտաւորութիւնս յայտնեցի : Վերտոնիւն ըսաւ ինձ որ իրեն նման մտերիմ և ճշմարիտ բարեկամի պարտքն էր ամէն ուժով խորհուրդիս գէմ գնել : Նախ կ'ուզէր հետեւանքները յիշել տալով միտքս փոխել անկէ, բայց ետէ կամակորկի, պիտի հարկադրուէր այնպիսի մարդերու աղդ տանել որք աստուգիւ կրնային վերջ դնել անոր : Այս նիւթի վրայ քառորդէ մ'աւելի ծանր ծանր խօսքեր ըսաւ ինձ և ի վերջէ կրկնեց իր սպառնալիքը որով պիտի մատնէր զիս ետէ խօսք չտայի իրեն աւելի խմսատուն և խոհեմ կերպով վարուելու :

Յուսահատութիւնը սկսաւ զիս պաշարել տեսնելով որ կոյր զկտրայն անձնատուր եղայ անոր : Սակայն երկու երէք ժամէ ի վեր սէրը չափէ զուրս միտքս քանելով ուշադրութիւն ըրի և գտայ որ չ'էի յայտնէր թէ հետեւեալ օրը սիրտի կատարուի զիտաւորութիւնս. ուտի որոշեցի խաբել զինքը բառով մը : Թիպերժ, ըսի անոր, մինչև հիմա կարծեցի որ բարեկամս էիր և կամք ըրի այս խոստովանութիւնովս փորձել զքեզ : Ստալք է որ կը սիրեմ այս օրիորդը. բոլոր ըսածիս մէջ սուտ մը չ'կայ, բայց փախուտի որոշում մը գեւ չ'ըրի, վասն զի այնպիսի ծանր պարագայի մէջ թէ՛ թեւեւեամբ չ'վարուիր : Վաղը առտուն ժամը իննին եկաւ զիս սա, կարելի է ցոյց կուտամ քեզ սիրունիս և աչքով կրնաս գատել ետէ տրամանի է կամ ոչ որ այսպիսի տղայութիւն մը ընեմ իրեն համար : Թիպերժ բիւր անգամ իր բարեկամութեան հաւատարմքը կրկնելէ ետեւ ելաւ, գնաց և իս միմակ թողուց :

Բոլոր զիշերը անցուցի զործերս կարգի դնելու համար և արշալոյսին սիրունիկա տունը երթալով տեսայ որ Մանօն ինձ կ'սպասէր : Գոհին վրայ նաչող պատուհանին առջև կայեմք էր. անանկ որ զիս տեսնելուն պէս ինք եկաւ զուրը բացաւ : Գուրս ելանք հիւ չ'հանելով : Ճերմակեղէնէ տրիշ ծրար մը չ'ունէր անիկա. դայն ես վրաս բեռնատրեցի. և որովհետեւ կտարք պատրաստ կը կենար, ներս մտանք և նոյն ժամայն հետաքսնք քաղքէն :

կտրել պիտի յիշեմ Թիպերժին ըրածը երբ անիկա տեսաւ որ զինք խաբէր էր : Ասոր վրայ իր բարեկամութիւնը թուրապէս տեղ սկսաւ ալ աւելի բորբոքել : Պիտի տեսնէր որ ծայրը հասաւ այն և սրբան արատաւ պէտք է որ թափեմ յիշելով անոր փոխարէն միշտ իմ ըրածս :

Այնքան արշաւակի կ'երթային որ մտած կոխելէն առաջ Սէն-Տընի հասանք : Ես կառքին քովէն կ'երթայի ձիու մը վրայ նստելով, այնպէս որ ձիւնը փոխելու տառն միայն կրնային իրարու խօսիլ քիչ մը. բայց երբ տեսանք թէ Բարիլի մօտ կը գտնուինք, այսինքն զրեւել տալանով տեղ ենք, կանգ առինք ժամ մը զովանալու համար, վասն զի Ամիէնէ ելնելէ ի վեր բան մը չ'էինք կերէր : Որչափ որ անգիտ սիրահար ըլլէի Մանօնին համար, անիկա կրցաւ զիս համոզել թէ ինքն ալ իզմէ վար չ'էր մնար : Զիջար շոյելու տառն այնքան սիրով կը յաւիշտակուէինք, որ համբերութիւն չ'ունէինք ատենանալու համար : Մեր կառքին և հիւրատունին մարդիկը զարմանքով մեզ կը նայէին և կը զիտէին որ կը հիանային մեր հասակով երկու մանուկ տեսնել այնչափ մոլորին սիրով զգլխած :

Կարգուելու խորհուրդները մուսանք Սէն-տընի հասնելէն ետքը : Նկեղեցոյ իրաւունքները նկեղեցիք և ամուսնացանք զրեւել յանգեաւ : Ստուգիւ ինծի պէս քնքուշ և անփութիւս բարբի տէր մարդ մը ասկէ աւելի չ'էր խնդրեր երջանիկ ըլլելու համար բոլոր կեանքին մէջ, եթէ Մանօն ինձ հաւատարիմ մնար : Որչափ աւելի կը ճանչնայի զինքը այնչափ աւելի սիրուն նոր յատկութիւններ կը գտնէի վրան : Իր միտքը, սիրտը, անուշտութիւնը և գեղեցկութիւնը այնքան ուժգին և մոգիչ շղթայ մը կը շինէին բոլորտիքս, որ անկէ դուրս ելնել երջանկութիւնս կարուցնել կը թուէր ինձ : Սոսկալի փոխիտութիւն : Ինչ որ հիմա ինծի յուսահատութիւն կուտայ, օրերով կրցաւ երջանկութեանս պատճառ ըլլել : Ամիէնէ թշուառ մարդ եղեր եմ այն յուսահատութեամբ ուրկէ կը յուսայի ամենէն քաղցր վիճակներ և սիրոյ լիովի փոխարէնները :

Բարիկ հասանք և զարգարուն սրահ մը բռնեցինք Վ... գոնէն մէջ, դժբաղդարար Պ. առ Վ... ին տանքով որ ընդհանուրվարձաւոր է (fermier général) : Երէք շաբաթ անցան, և այս միջոցին այնքան սիրով կը ղեզուէի, որ հաղիւթ ընտանիքս յիշեցի և միտքս բերի արամութիւնը որով հայրս պիտի չարչրուէր հեռակայութիւնս զգալով : Սակայն, որովհետեւ անառակութիւնը մտան չ'ունէր ըրածիս մէջ և Մանօն ալ զգուշեալ կը վարուէր, քիչ մը հանգարտեղնուս պէս սկսայ փոքր առ փոքր մտածել որդիական պարտքին վրայ :

Միտքս զրի, որ եթէ կարելի էր, հօրս հետ հաշտութիւմ : Տիրութիւնս այնքան սիրուն էր, որ կասկած չ'ըրի թէ հաճելի չ'երեւի եթէ, կերպով մը, հայրս ճանչնայ անոր զգաստութիւնը և արժէքը : Մէկ խօսքով ըսեմ, կը յու-

սայի որ ազատութիւն կուտայ ինծի որ զանիկա կին առնում, վասն զի առանց իր հաւանութեան կարգուելու յոյս չ'էր մնացեր քովս : Դիտաւորութիւնս Մանօնին յայտնեցի և հասկցուցի իրեն որ սիրոյ և սպարտաւորութեան տոխններէ զառ' հարկաւորութիւնն ալ կրնար քիչ մը զրգուել զմեզ ապագայ վարուելու, վասն զի մեր գումարը օրէ օր նուազեր էր և ալ տղայութեամբ չ'էի հաւատար որ անհատնում են մեր ոսկիները : Մանօն պաղ կերպով ընդունեց առաջարկութիւնս : Սակայն իր թեթեւ ընդգիմութիւնը առաջ կուգար իր սէրէն և կը վստահէր թէ' չ'ըլի որ հայրս մէջ մը մեր սիր պահուիլը իմանալէն ետեւ, խնդրէր մերժել. ուստի կասկած մը չ'ունեցայ այն հարուածին վրայ սրով զիս պիտի վերաւորէր սիրտնիս : Քանի մը շաբաթ ետս ապրելու ստակ ունինք, ըստ անիկա, անհոգ եղիր, անկէ ետեւ ես ճար մը կը գտնեմ մէկ երկու ազգականներու զրկելով որք գաւառի մէջ կը բնակին և որք իս շատ կը սիրեն :

Իր ընդգիմութիւնը մեղմեց այնպիսի փափուկ և վստաւուն գգնանքով որ, միայն իր սիրտին մէջ ապրելով և կասկած մը չ'ունենալով անկէ, ծափ զարկի իր ըստմենքուն և որոշումներուն :

Իր վրայ ձգեր էի մեր քսակին կապը և տունին հարկաւոր ծախքերու հոգը : Շատ չանցաւ տեսայ որ մեր սեղանը աւելի հարուստ էր և իր վրայ մեծագին զարդեր կային : Կա զիտէի որ քսակին մէջ տառնեղիւ կամ տառնեղինգ սոկիէն աւելի չկար. զարմանքս իրեն յայտնեցի մեր բարօրութեան աւելնալուն վրայ : Ես քեզի չ'ըսի մի, պատասխան տուաւ անիկա, որ ճար մը կը գտնեմ մեր վիճակին : Կարի պարզ սիրտով կը սիրէի զինքը և չ'էի կրնար զիւրաւ կասկածի երծալ :

Որ մը կէսօրէն ետեւ դուրս ելայ ըսելով որ սովորութիւնէն աւելի պիտի ուշանամ տուն գառնալու : Ի դարձին զարմանք տուաւ զիս անանկելով որ դուռն առջեւ երկու երէք քուէ սպասել տուին զիս : Մեր սպասարարը զրեւել մեղի հասակակից տղջիկ մ'էր : Նրբ եկաւ գուռը բացաւ, հարցուցի իրեն թէ' ինչո՞ւ այնքան ուշացաւ բանալու : Շփոթելով պատասխան տուաւ թէ չլսեց : Մէկ անգամ միայն զարկեր էի, ուստի կրկին ըսի իրեն. եթէ չլսեցիր հապա ինչպէս եկար բանալու : Հարցումս այնքան զինքը վրդովեց որ իր միտքը չկրցաւ հանգարտ մնալ և պատասխան մը չտուէր. սկսաւ լալ և երգնուլ որ յանցանքը իրեն չ'էր և տիկինը պատուիրէր էր դուռը չբանալ մինչև որ Պ. առ Պ... դուրս չ'երէր գաղտնի սանդուխէ մը որ կը հաղորդէր անոր առանձին սենեակին հետ : Այս խօսքին վրայ այնչափ արիւնս տակու վրայ եղաւ որ ոտքս առաջ չգնաց սրահը մտնելու : Աւելի քան սեպեցի վար իջնել, զորմ մը պատճառելով և աղջիկին հրաման տուի որ Մանօնին իմացնէ թէ շուտով ետ պիտի գառնամ, բայց չյայտնէ անոր Պ. առ Պ... ին վրայօք ըսածը :

Այնքան սրտաբեկ թունդ մը պաշարեց զիս որ ար-
ցուք ծափելով սանգուխէն վար իջայ սուսանց զխոնարհ
ձէ ինչ զգայութիւնն կը բխէր այն : Առջեւ ելած
սրճարանը մտայ և սեղանի մը զեմնատեղով զլուսն շը-
կու ձեռքիս մէջ առի ու սկսայ խորհիլ, քննել սիրտիս
մէջէն տնցածը : Կը վախճայի յիշել ինչ որ քիչ մ'առաջ
լսեք էի, կ'աշխատէի երաւ մը սեպել զայն, և երկու
երեք անգամ ոտքի ելայ առն դաւանալու համար ամէն
բան չգիտնալու դարձելով : Այնչափ անհնարին կը
ծուէր ինծի Մանօնին մատնած թուրը, որ իր սիրոյ վրայ
կատկածիլ զինք նախատեսու պէս կուգար : Կը պաշտէի
զինքը ի սրտէս և անկեղծ հոգով. իրմէ ընդունած սէրս
նուազ չ'էր իմ տուածէս. ինչպէս կրնայի զբարտեղ
զինքը և իմինէս պոկաւ անկեղծութիւն ու հաստատու-
թիւն անոր վրայ բռնադրել : Ի՞նչ առիթ կրնար ունե-
նալ զիս խաբելու և ուրիշի մը յարելու : Դեռ երէք ժամ
չկար որ սիրաբոյր կերպով զիս զրգուեր էր և հոգի
կուտար վրաս երբ ես ալ զինքը ժախարէն կը շոյէի, կը
զրգուէի և կը պատուասիրէի : Սիրտս իր սիրտէն աւելի
չէի ճանչնար որ զանգուէի : Այժմ ոչ բնաւ, ըսի իւրովի,
վայրկեան մը հանդարտեցնէ ետեւ, անհնարին է որ Մա-
նօն մտանէ. անիկա լաւ գիտէ որ իրեն համար միայն
կ'ապրիմ. համոզուած է անիկա որ ինքը կը պաշտեմ
և այս՝ տեսնու սոխի մը չկրնար ըլլի :

Սակայն Պարոն տը Պ... ին այցելութիւնը և գաղտնի
փախուսած հանդարտ չ'էին թողուր զիս : Կը յիշէի
նաեւ Մանօնին ծախսու առած բաները ուրք, ըստ իս, մեր
քսակին ոսկիներէ աւելի կ'արժէին : Նոր սիրականի
առատածնածութիւններու հոս մը կ'զգայի հոն : Միտքս
կ'իյնար այն վստահութիւնը որով անիկա յայտնէր էր
ինծի, թէ անձանթ կերպեր ունի մեր պակասութիւնները
լեցընելու համար : Այսչափ զաղտնիքներու լաւ մեկնու-
թիւն մը չ'էի կրնալ առ և սիրտիս բուրբ մեղմել :

Բայց կը յիշէի նաեւ որ Բարիզ հասնելէ ի վեր բոլոր
մը աչքիս առջեւ կ'որոտած չ'էի զինքը. զբաղելու,
պտըտելու, զբօսնելու ժամանակ՝ միշտ մէկտեղ զըտ-
նուեր էինք. բոլորէի մը բաժանումը մեզի անտանելի
կակիծ էր : Ի՞նչ ըսեմ : Անդու անդադար պէտք էր որ
իրարու կրկնէինք թէ զիրար կը սիրէինք, եթէ ոչ ան-
կարելի էր մեզի հանգարտ ապրիլ : Չ'էի կրնար ուրեմն
էրեւակայել ժամ մը ուր Մանօն աղաւ ելած էր իզմէ
զատ ուրիշի մը սիրահարելու համար :

Ի վերջէ այս գաղտնիքը լուծելու նշույլ մը ծագեցաւ
միտքիս մէջ : Ինքս ինքիս ըսի. Պ. տը Պ... այնպիսի
մարդ մ'է որ մեծ մեծ գործեր կ'ընէ և շատ երեւելի ըն-
տանիքներու հետ յարաբերութիւններ ունի : Անտարա-
կոյս Մանօնին ազգականները անոր ձեռքով ստակ
զրկեցին և անիկա այսօր եկաւ նոր գումար մը բերելու
համար : Մանօն ինծի բան մը չ'ըստ որպէս զի տոխ
ունենայ մէկէն վարագոյրը բանալու և զիս զարմացը-

նելու համար : Կարելի որ փոխանակ հոս գալու և
տրամելու, եթէ սովորականին պէս տուն դարձած ըլլի,
ինծի խօսք բանար անոր վրայ : Հաւատալի եմ որ իզմէ
չպիտի պոսէ զայն, զոնէ ինչ տուն ես հարցնելու ըս-
կիմ :

Այս կարծիքը այնքան միտքս համոզեց որ կրցաւ
սիրամեծիւնս սատարիկ մեղմել : Իսկոյն տուն դարձայ,
սովորական զրգուտնքով Մանօնը պագիւ ելաւ լաւ ըն-
դունելութիւն գտայ անորմէ : Առջի բերան կը փափա-
ղէի յայտնել կատկածներս որոնք այն տանը բարորակ
ստաց ի՞րերէն ինծի : Ինք զինքս բռնեցի յուսալով,
որ զուցէ զիսմամբ տկարակութիւն մ'ընէ եղածը ինձ
պատմելու ժամանակ :

Ընթրիքի ժամը եկաւ և սեղան նստանք : Ես՝ ուրախ
դուարձ էի, բայց երկուքիս մէջ եղած ճրագին լոյսովը
տեսայ որ սիրունի օրիորդիս զէմքին վրայ և աչքերուն
մէջ տրամաւորութիւն մը կար : Այս տեսքը ինծի ալ տրամու-
թիւն տուաւ : Նշմարեցի որ իր նայուածքը իմ վրաս
կ'իյնար անսովոր կերպով մը : Չ'էի կրնար ճշգիւ որո-
շել եթէ սէր կամ զթաւիսն կը ծագէր անկէ, թէպէտ և
յայտնի երեւէր ինծի որ անուշ և կամոզիւն զգայութիւն
կը յայտնէր այն : Ես ալ նոյն ուղով նայեցայ իրեն, և
զուցէ ինծի չափ զմտաբուծիւն կ'զգար անիկա նայուած-
քէս իմ սիրտիս վիճակը դատելու համար : Յաւելա-
կուեր փնտցիւր էինք և ոչ խօսելու և ոչ ուտելու կամք
ունէինք : Վերջապէս տեսայ որ աղցունքի կտորիկ
իր շքեղ աչքէ կը վազէին : Ի՞նչ մասնաւոր արցունք :

Ախ, արեւիկայիւրմամ, պտուղիկս ևս, սիրելի Մանօն
կուրսս, լոյսը չափ տրամաւորութիւն ունիս և բան մը չես
ըսեր քու վիշտերուդ վրայ : Գանի մը հեծանքով պա-
տասխան տուաւ և թունդս մեղմելու տեղ սկսաւ աւելի
ստատկոյալ գողգողով ոտքի ելայ, սիրոյ ամէն արագու-
ծեւ փոթերով մօտեցայ, աղաչեցի որ իր լալու պատ-
ճառը յայտնէ. այնքան որ իմ աչքերէս ալ արցունք
ծափել սկսաւ : Աւելի մեծած քան թէ կենդանի էի.
բարբարոս սիրտ մ'անգամի գում օղիտի շարժէր տես-
նելով տրամաւորութիւն և անուշադիս հաւատարմութիւն :

ԵՐԿՈՒ ՏՈՄՍԱԿ

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ.

(Շարունակութիւն և վերջ. Տես րիւ 8, էջ 60.)

ՏԵՍԱՐԱՆ 2.

ԱՐԼՐԲԷՆ, ՍՔԱՐԷՆ

(Խորտու կը նային թիկ)

ԱՐԼՐԲ. Ի՞նչ կը նշանակէ այս ամէնը : Ի՞նչպէս կ'ըլ-
լայ որ տոմարս իմ քովս չ'գտնուի և քու քովդ ըլլայ :

և ինչո՞ւ Արժանքին թեթև առթի մը համար այսպէս կը վարուի հետս :

ՍՔԱՐ. Չգիտեմ, բարեկամ, Արժանքին ինչ տուտ ինծի այս տոմսակը ըսելով որ իսկը փափագի ընտրել իրբն ամուսին :

ԱՐԼԲ. Այս տոմսակը իմն է. լաւ կը ճանչնամ զայն. այնչափ զայն սրգի, շոյեցի որ հիմա գերեզը գրեթէ արուած էն : Ի՞նչպէս Արժանքին զայն ձեռք բերաւ. ուրիշ գիտէ որ էս Վիօլէթը կը սիրեմ, էրբէս էկրի վրայ Արժանքինէ ուրիշ մէկը չ'էմ սիրած : Ա՛հ հերիք է. այս ո՞րքան անբազդութիւն է. անհնարին է որ այս տեսէ : Դուն ուրեմն հարս պիտի առնուս զանի :

ՍՔԱՐ. Չ'է չ'ըսուիր. ինչ ընեմ իր կամբը այս է :

ԱՐԼԲ. Քեզի բան մը ըսեմ. շատ լաւ կընես եթէ կորիս հրծառ ասկէ, վասն զի զրոյս տաքնալով գրեզ այնպէս կը զանեմ, որ կը բռնադատուիս հարսանիքը ուշացընել : Վարելի է թէ՛ այս ամէնը քու ձեռքով պատրաստուած դարան մ'է. լաւ գիտեմ որ տոմսակս իմ գրպանիս մէջ էր, դու զայն գողցիր էս անկէ :

ՍՔԱՐ. Բարեկամ, իս այսպէս կը ճանչնաս հոն : Մի անոյն զրպանի մէջ վիճակի տոմսակ մը ունէիր որ հրեւոտն հազար ֆրանք կ'արժէ. եթէ կարելի ըլլար ինծի գողնալ՝ աներկբայ այս հոբի տոմսակը կ'ընտրէի. խելքդ ինչ կը կարէ :

ԱՐԼԲ. Երանի թէ զայն առած ըլլային և նամակին չ'զգէին : Հիմա ինչ պիտի ըլլամ. Արժանքին ալ իս շտրէք և ուրիշի մը հետ կարգուիլ կը պատրաստուի : (Կ'ողբայ) Ո՛հ. երկրի վրայ միս միշակ պիտի մնամ : Օ՛հ. հարանիքէ տառք մեռնելու աշխատելու է : (Կ'ողբայ)

ՍՔԱՐ. Իս ի զու՞ կը շարժես, բարեկամս, և համակրութիւնը զոր ունիմքու վրայ իմ սիրոյ կը յաղթէ : Ինծի նայէ, Արժանքին խօսք տուաւ կ'արգուիլ այն երիտասարդի հետ որ տոմսակը իրեն կը բերէ : Հիմա այն իմն է. եթէ կը հաճիս վիճակին տոմսակը ինծի տուլ, էս զայն քեզ կ'ուտամ :

ԱՐԼԲ. Տո՛ւր, շուտ տո՛ւր, սո՛ւ, քեզի ըլլայ միտը : Անանքիս մէջ այսպիսի շահաւոր տուրեալումը չ'եմ ըրեր :

ՍՔԱՐ. Եւ ոչ էս : (Տանակները կը փոխեն) :

(Արլըքէն դիմաւարար Արժանքինի տանակին խօսելով)

Ա՛հ ի վերջէ ձեռքս ինկար, բայց ինչո՞ւ թողիր վախար, պզտի սպերախտ և խենթուկ. միթէ նարէն ձեռքէ ձեռք պիտի թոխս երթաս : Միթէ Արաօններու գերի պիտի ըլլաս նորէն և փրկանակ (raison) վճարել տաս : Ասանկ բան մը չ'ընես, վասն զի վճարելու ստակ մը չ'ունիմ : Այս անգամ կը ներեմ քու տղայական վարքիդ, այլ կ'ուզեմ որ նորէն չ'սկսիս : Յիտ պագտինք և ամէն բան մոռցուի. (կը պագեն) :

ՍՔԱՐ. Ե՛յ, ըսէ նայիմ տոմսակը իմն է :

ԱՐԼԲ. Հո՛, հո՛, քանի անգամ ըսելու է քեզ : Ես քեզի տոմսակ մը տուի որ միշտ վճարելի է որս ձեռ-

քով և բերուի. դու ալ այնպէս տոմսակ մը ինծի տուիր, միայն՝ կը բարեմաղթեմ որ իմ քուկինիդ պէս դիւրաւ վճարուի : Արժանքն որ վերստին պիտի կորի, ուտի երթամ շուտով իր տիրութիւն տանիմ զայն : Այլի, բանդ զնո՞ կ'աղաչեմ, վասն զի միշակ կ'ուզեմ խօսիլ տնար հետ :

ՍՔԱՐ. Իրաւունք է : Մնո՞ բարեաւ, բարեկամս. շիտակ ըսեմ զո՞ն էմ որ քեզի դուարեութիւն տուի : Այսպէս ծներ էմ էս. քնքուշ սիրտ մ'ունիմ և երբէք արատաւորի չ'կրցայ զխանայ :

ԱՐԼԲ. Վնո՞, զնո՞ ստակդ սո՛ւ. դեղին զուտը կը տեսնես, հոն է քու սիրտդ, վասն զի հոն կը տրուի ոսկի :

ՍՔԱՐ. (մեկտախ) : Պանուկնք ի խորը գտեհի և նախնիք ինչպէս պիտի ընդունուի Արժանքինէ :

ՏԵՍԱՐԱՆ Է.

ԱՐԼԲԷՆ, ԱՐԺԱՆԹԻՆ, ՍՔԱՐԷՆ : քաղաք

(Արլըքէն կը զարնէ) ԱՐԺԱՆ, Ո՞վ է այն. (ի պատահակ) Ի՞նչ, զուք էք նորէն. տակաւին երես ունիք տունիս վրայ նայիլ : Վարելի է թէ ներս մտնելու յոյս ունենաք. այնպէ՛ս կը կարծէք որ ... :

ԱՐԼԲ. Ներս մտնել չ'եմ փափագիր. կը տեսնեմ որ կարգէ զորս բարկութիւն ունիք. կ'ուզեմ չորս բաւ ըսել ձեզի. աշխատ եղիք վար իջէք, և ... :

ԱՐԺԱՆ. Բաւ մը չ'եմ ուզեր լսել. զնո՞ բանդ և տանիլ երեսդ չ'առնեմ. (կը փակէ պատուհանը) :

ՍՔԱՐ. (մեկտախ), Լաւ. երթամ էս ստակը տանում և յետոյ զամ Արժանքինը զանեմ. կը յուսամ և կարգուիլ և երեսուն հազար ֆրանքը շահիլ :

ՏԵՍԱՐԱՆ Ը.

ԱՐԼԲԷՆ, միկնակ

Այս սրբան ծշուտ էմ. տոմսակս անգամ ցցունել չ'եմ կրնար անոր : Եթէ այս ժամը կորուսեմ, ամէն քան պիտի կորուսուի. վասն զի սո՛ւ անտուկ Արաօնքէն ուր էնէ կուգայ հիմա և ալ չ'երթար : Օ՛հ. քու շաղկրուէ. կղզամ որ հոգիս կը կլլեմ, որ տրամուծենէս կը մեռնիմ, այլ մինչև երեկոյ դեռ ասպրելու է. տեսնենք ինչ կ'ելլէ տակէն ... : (կը զարնէ) :

ՏԵՍԱՐԱՆ Թ.

ԱՐԼԲԷՆ, ԱՐԺԱՆԹԻՆ, ի պատահակ

ԱՐԺԱՆ. Ո՞վ է. վերստին զուք հո՛ :

ԱՐԼԲ. Մի բարկանաք. ալ չ'եմ ինդրեր ձեզի խօսելու, սրովնեա և կը մերժէք զայն. միայն կ'աղաչեմ որ ձեր տոմսակը էս տանէք :

ԱՐԺԱՆ. Տոմսակ մի, ինչ կ'ըսէք. ձեր բնիկ է այն. վնջ տոմսակ վնջ աշխարհիս մէկ ծայրէ միւս կ'երթայ կուգայ ուրեմն: Սպասեցէք, ահա կ'իջնեմ:

ԱՐԼԲ. Բիշ մը յոյս առնուլ կ'սկսիմ. խիղճս համ-դարտ է և յանդիմանքի բան մը չ'եմ նշմարեր. կը սի-րեմ, միշտ սիրեր եմ դանի. Արժանթին ալ զիս սիրեր է և երբ մէկը կը հաւանի ունիմ դնել մէկուն դար սիրեր է և որ կը սիրէ զմեզ՝ անոր հաւատարմութեան և փա-փազ է այն...: Ահաւասիկ:

ԱՐԺԱՆ. Մի մտնաք որ անցեալին վայս խօսք և մեկնութիւն չ'եմ ուզեր. ըսէք միայն թէ ինչպէս այս տոմսակը ձեր ձեռքը ինկաւ:

ԱՐԼԲ. Ասէք դայն, ահաւասիկ է. ստեղծեմ մէկը չկրնար ուրանալ որ իմ չ'ըլլայ այն. յոյս և երանոթիւն սնկէ կուգան ինծի. այսու ամենայնիւ, որովհետեւ առանց ձեր հրամանի երանութիւնը բան մը չ'արժէր, ձեզ տալու պատրաստ եմ եթէ չ'էք հաճիր որ պահեմ:

ԱՐԺԱՆ. Ո՛չ չ'եմ հաճիր, մի տարակուսիք, որ պա-հէք դայն. (տոմսակը կ'առնու): Ես ձեզի համար զրեմ և դուք այնքան արհամարհելի կերպով զարմածէք և երծանք ուրիշ կնկան մը զոնէք դայն, ո՛հ այս ներքի չ'է:

ԱՐԼԲ. Ուրիշ կին մի. ո՛հ սիրտս վկայ է որ երկրի վրայ մէկ կին միայն կը պաշտեմ. և երբ սիրտս վկայ կը բռնեմ զձեզ վկայ բռնելու պէս է:

ԱՐԺԱՆ. Ստեղծեմ երէկ ես ձեզի զրկեցի դայն և այ-սօր Արարէն ինծի բերաւ տուաւ. այս ինչպէս կ'ըլլայ:

ԱՐԼԲ. Արարէնը բերաւ դայն, այ տոմսակ նենգա-ւոր. նայեցէք մէջ մը ինչ վատութիւն. որովհետեւ ինծի ըսաւ որ դուք դայն անոր տուէր էք: Հիմա հաւատարի եմ որ իմ վրայէս զողջաւ դայն:

ԱՐԺԱՆ. (մեկտախ) Արարէնին ձեռքէն ասանկ բաներ կուգայ: Ո՛հ սիր էր թէ ըսածը ճշմարիտ ըլլար:

ԱՐԼԲ. Ի յուշ բերէք մէջ մը օրիորդ, թէ երկու տա-րի է որ զձեզ կը սիրեմ և օր մը իս փոխառած չգտար: Կը կարծէք թէ այսքան երկար տառն կարելի է ծաղիլ և զձեզ խորել: Սիրուհիդ իմ... (Արժանթին կը նայի խաղիւ): Օրիորդ ներքեցէք որ այս զողջեմ տուի:

ԱՐԺԱՆ. Բայց ինչպէս այս տոմսակը տուիք, ո՞վ տը-ւաւ ձեզի դայն:

ԱՐԼԲ. Վիճակը:

ԱՐԺԱՆ. Վիճակ ըսիք... Միթէ տոմսակը ի վիճակ զրուեցաւ: Ժամ մը առաջ Արարէնի քով էր այն ուրեմն անիկա տուած քեզ:

ԱՐԼԲ. Չտուաւ, վաճառեց:

ԱՐԺԱՆ. Ի՞նչ ըսել կ'ուզէք:

ԱՐԼԲ. Ահա բանին էութիւնը. վիճակէ երեք թիւ տուել էի վեց ֆրանքի. երեքն ալ միատեղ ելան և շա-հեցայ:

ԱՐԺԱՆ. Այլ բազմալ է թէ այս երեք թիւ մէկէն ելան, վեց ֆրանքը անթիւ հարստութիւն կը բերէ:

ԱՐԼԲ. Այո. կ'ըսեն թէ շատ ստակ կ'արժէ: Այլի որ զեւ չ'էի վճարուած: Արարէն, զիս յուսահատ և ուր-տաւեղ տեսնելով՝ առաջարկեց որ վիճակին տոմսակը ձերինին հետ փոխեմ:

ԱՐԺԱՆ. (աժգնակի): Եւ դու փոխեցիր:

ԱՐԼԲ. Վրայ ալ կուտայի եթէ ուզէր անիկա:

ԱՐԺԱՆ. (կ'ընդգրկէ): Սիրելի բարեկամ, հիմա կը տեսնեմ որ անմեղ ես. մինչև ի մահ պիտի սիրեմ ըզ-քեզ. այս բոլ սիրոյ նշանով կ'զգամ թէ ինչ կ'արժէս:

ԱՐԼԲ. Այսպէս ուրեմն, այն մարդիկ որ շահաւէտ առուուր ընել զիտեն առեղ յարգ ունին:

ԱՐԺԱՆ. Ներում խնդրեմ քեզմէ. չ'էի ճանչնար զքեզ. հիմա կրնաս իմ տոմսակս պահել: Ես կրկին կ'երդ-նում որ զքեզ կը սիրեմ և յաւիտեան ուրիշ մը չ'պիտի սիրեմ. այս երեկոյէն սկսելով ամուսին կրնամք հա-մարուիլ:

ԱՐԼԲ. Կրկին կը սիրէք զիս. ո՛հ, ինչ ուրախութիւն. (Չեպքը կը պահէ): Բայց շխտակը ըսեմ, սիրուհի, պէտք չ'է որ ալ կրկնես դայն, վասն զի նորէն ձուն մը կուգայ զուխնիս: Թող միայն երեսդ նայիմ և դու չ'ըսած կը տեսնեմ որ իս կը սիրես:

ԱՐԺԱՆ. Ուղածք ըրէ և հաւատարի եղբորս երջանկու-թիւնդ կատարեալ պիտի ըլլայ, զոնէ մինչև այն վայր-կեանք որ իմ սէրով կը բաւականաւ:

ԱՐԼԲ. Ո՛րքան առեն է որ այսպէս անոյշ խօսքեր բոլ բերնէ-չ'էին ելներ: Կ'ուզես ինծի զուարթութիւն տալ, կարգոն նայիմ ինչ կայ սըւոր մէջ: (Նստակը ցոյց կուտայ անոր):

ԱՐԺԱՆ. Կը կարգայ. « կը սիրեմ զքեզ »:

ԱՐԼԲ. (Միմուկով). Ի՞նչուր ըսիր, չկրկնես:

ԱՐԺԱՆ. Կը սիրեմ:

ԱՐԼԲ. Տնոր նայիմ, ես ալ կարգամ մէջ մը: Կը կը մե գեղով սի, սի, բեմ, բեմ, կը սիրեմ, կը սիրեմ, կը սիրեմ... Այս ինչ փոքր բառ է, սիր էր թէ բոլոր այ-րուքնի տեղը բռնէր:

ԱՐԺԱՆ. Բոլոր կեանքիս մէջ ես դայն քեզ կրկնեմ. հիմա թող որ զրադիմ ես առնուլ ձեռքեդ յաւիտեակը տոմսակը:

ԱՐԼԲ. Ի՞նչ է այդ, ո՞ք տոմսակի խօսք կ'ըսես:

ԱՐԺԱՆ. Վիճակի:

ԱՐԼԲ. Կ'աղաչեմ, հոգիս, ալ անոր խօսքը մ'ընէր. տալիս տուինք, ամէն բան լմնցաւ. հիմա պահանջելու ըլլաանկ կարելի որ զաջն աւրուի և մեր տոմսակը ետ տրուի: Ո՛չ. ո՛չ. ամէն բան լմնցած է. դու իս կը սիրես... անա հոն է բոլոր հարստութիւնս:

ԱՐԺԱՆ. Պիպի չ'ծողում դայն անոր... Ահա Արա-րէնը որ կուգայ: Մեր ասան մէջ պահուէ և մինչև որ չկանչեմ մի ելներ անիկ:

ԱՐԼԲ. (Խառն մտնելով). Անանկ է նէ շուտով կան-չէ զիս:

ԱՐԺԱՆ. Հն, հն, դո գնո, պոհոմ :

ԱՐԼԸԲ. (Դո գալո.) Մի՞թէ իս կանչեցիր :

ԱՐԺԱՆ. Ոչ, բարեկամ, շուտ ըրէ, պոհոմ կ'ըսեմ. տնտեսիկ է նա և զեռ տոմսակը ի՞նչո՞ւն ունի նկն-
գուորը :

ՏԵՍԱՐԱՆ Ժ.

ԱՐԺԱՆԹԻՆ, ՍՔԱՐԵՆ.

ՍՔԱՐ. (Տոմսակ ի ձեռք.) Գրողը տանի այս տեսակ
սեղանադրները որք միշտ հետեւեալ օրին կը զրկեն...
(Կր ելնարե գլխածակին և տոմսակը ի գրպան կը դնէ.)
Ես քեզ տեսնելու կուգայի; զեղեցիկ Արժանծին :

ԱՐԺԱՆ. Ես ալ գոհ եմ որ քեզի հանդիպեցայ : Գր-
տեա արդեօր ինչեր անցանքու հեռակայութեանդ ժա-
մանակ :

ՍՔԱՐ. Բանէ լուր չ'ունիմ. ինչ է նայինք :

ԱՐԺԱՆ. Սա աներես Արլըքէնը սուսն եկաւ յանդգ-
նօրէն և ևս այնպիսի ընդունելութիւն մը ըրի որ մէյ
մ'ալ գալու վախազ չ'սխալի ունենայ :

ՍՔԱՐ. (Խեղճաբար.) Տեսայ, Օրիորդ, ամէնը տեսայ.
Ես գոհեմ խորշը պահուելէ երբ պատուհանը երեսին
հրեցիր որ ձայնը չ'առնուա : Այլ խօսինք ուրիշ բանի
մը վրայ որ ինձի աւելի օգտակար է. քիչ մը առաջ
ըրած ձեր խոստումը չ'ուսցար, կարծեմ :

ԱՐԺԱՆ. (Ախշի.) Սկսաւ, սեղանադրութիւն : (Բանձր
ձայնով.) Այն, խոստումս կը յիշեմ և սխալ կատարեմ,
սակայն ուրախ կ'ըլլամ որ շիտակ շիտակ առաջ միտքս
կը յայտնեմ քեզ : Երբիկ կ'առնուի որ անկէ սիրուիմ.
ուստի, սիրելի Աքաբէն, Եթէ քու զգայունները անկեղծ
են, յոյս ունիմ որ ինձի Երանութիւն պիտի տաս : Իմ
տիրուհի, օրիորդ Օղաղապայն շնորհիւ, ևս հարուստ
եմ և երբիկս հարստութիւն չ'եմ պահանջեր. սիրտս և
ինչս ամէնը անոր առկա կուգեմ և իր սէրէ ուրիշ փոխա-
րէն մը չ'եմ խնդրեր իրմէ : Ըսէ՛ ուրեմն ինձի յայտնի և
մեկին կերպով՝ Եթէ իս կը սիրես, իս և ոչ ուրիշ բան :

ՍՔԱՐ. Ահ, օրիորդ, կ'ուզէի աշխարհիս բոլոր եր-
դամները զիսմայ, սրտես զի երդում ընեմ, թէ բոլոր
կենանքիս մէջ... :

ԱՐԺԱՆ. Ուշ զիրքու խօսքիդ, ևս անպատահ ընտելիւն
մ'ունիմ. հոս գալու տանեղ ծուղո՞ւ մը ունէիր ի ձեռքին
դոր երբ իս տեսար պահեցիր պզտիկս. հաւատարիմ
որ կնկան նամակ մ'է այն :

ՍՔԱՐ. Կնկան նամակ մի, իմ վրա հն : Ասոր պա-
տասխանս կուտամ թէ,

ԱՐԺԱՆ. Այն նամակը տուր պատասխանի տեղ, կ'ու-
զեմ, կը պահանջեմ զայն. Եթէ ոչ՝ իս մոռնալու է : Օրի-
որդ Վիճիթը սիրական մը գտաւ որ իմ տոմսակներս
անոր կը դոնէր, ինչպէս ըսիր : Դո ինչո՞ւ ինձի չ'սխալի
դոնէն այս նամակը : Ես ալ Օրիորդ Վիճիթին չ'ափ եր-
ջանիկ ըլլալ կ'ուզեմ :

ՍՔԱՐ. Դժուարին է կամքդ կատարել, վասն զի բո-
լոր կենանքիս մէջ կին մը ինձի նամակ չ'է զրեր երբեք :

ԱՐԺԱՆ. Այդպէս կ'ըսես որ չ'արկադորտիս ցուցնելու
այն ծուղո՞ւ դոր ի ձեռքին ունէիր, և բոլ մերժումդ կը
հաստատէ իմ կարծիքս :

ՍՔԱՐ. Ստուգիւ փափագելի էր որ սէրս աւելի զժ-
ւարին փորձի մը մէջ դնէիր : Շատ պիտի դարմանաս
երբ տեսնես որ կնկան նամակ կարծեալը վիճակի տոմ-
սակ մ'է : (Միժմանքի կը յափշտակե գայն.)

ԱՐԺԱՆ. Ասի, ձեռքս է հիմա այն. և ամենէն խարե-
բայն խարեցի. Արլըքէն, Արլըքէն, դուրս ելիր :

ՏԵՍԱՐԱՆ ԺԱ.

ԱՐԼԸԲԵՆ, ԱՐԺԱՆԹԻՆ, ՍՔԱՐԵՆ,

ԱՐԼԸԲ. Ի՞նչ է. ինչ կայ. մի՞թէ քեզմէ ալ բան մը
գողցաւ :

ԱՐԺԱՆ. Ո'չ, բարեկամս, ընդ հակառակը տոմսա-
կըդ անորմէ յափշտակեցի : Ահա հիմա երկուքնէս
ամենէն հարուստը դուն և ևքեզմովես սխալ պերճանամ
հիմա : Եւ դուք, պարոն Աքաբէն, որ կարծեր էիր թէ
զիս խարեր էր և որ այս վայրկեանի մէջ իզմէ խարուած
կը գտնուիք, խրատ կուտամ ձեզի միշտ այնպիսի
բարի առաւարտներ ընել : Շահեկէն ևս սովորելու
է պահել ձեր սատանութեան պատուը որ նորէն չ'առ-
բուիք : Մնաք բարեաւ, մենք քիչէն կերթանք տանաւա-
նալու և մեր հարստութիւնները վայելելու :

ԱՐԼԸԲ. Թշուառ մեղաւոր. զառս կը շարմէ : Աքաբէն
ինձի նայէ, տիկինս սպասեակի մը հարկաւորութիւն
ունի. Եթէ ուզես, նախապատիւ կ'ընտրենք դքեղ :

ԱՐԺԱՆ. Ո'հ, ո'չ. բաւական հաւատարմութիւն չ'ունի :
Մնաք բարեւ, պարոն Աքաբէն : Քանի մը օրէն Բանտօղի
տիրութիւնս հայրը, Պերգամայ կը դառնայ. Արլըքէն և
ևս անոր Ետեմէն պիտի երթանք հոն : Եթէ այս երկիր-
ներու համար յանձնարարութիւն մ'ունիք, կամաւ
կ'ընդունինք և կը կատարենք. ալ Եթէ հոս կ'ուզէք յա-
ջողիլ, յիշեցէ՛ք միշտ որ պէտք չ'է երբեք երկու սիրա-
կան իրարու հետ աւելի, վասն զի անոնք միշտ կը հաշ-
տուին ի վնաս բանասարկութեան : (Դռնա կ'ընկնէ.)

ՏԵՍԱՐԱՆ ԺԲ.

ՍՔԱՐԵՆ, մի նակ

Անով միայն կը մխթաբուիմ որ իզմէ բան մը ի վը-
տանդի չ'զրի. չ'յաջողեցաւ, այլ կրնայի շահիլ լիօրէն :

ՖԼՕՐԻԱՆ.

ՎԵՐՁ ԵՐԿՈՒ ՏՈՄՍԱԿԻ.

Համարատու Տըլէզը.

Ի ԲԱՐԻՉ, ԱՐԱՄԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ.

Paris.— Typographie Arménienne Walder, rue Bonaparte 34.